ների ջիրիթի խաղը շատ զուարճալի էին, բայց երբ Սողանլու անտառում կաղնին պտուղ չունէր, Պանտան տանձ չունէր, չէին կարող այնպէս գրաւել, ինչպէս հրապուրում էին Կլարջէթի շրջակայքը։

1873 թ. Մայիսին Տանձոտցի Ոստակենց Մկրի հետ գնացի Մերդենիկի եւ Կոծձորի ճանապարհով Փէնէքկերտ, Ոլթի եւ Թափուսքար։ Մկրը այս երկրի յայտնի Բաղաղն էր (ծոթածախ) եւ բոլորից յարգուած չէխն էր. 7 տարեկան հասակից մինչեւ 70 տարուան հասակը եւ մահը Մկրը կեանքը մաշել էր Փէնէքի շուրջը. նա ճանաչում էր անուն անուն ոչ միայն բոլոր գիւղերը, ձորերը, առւակները, լճակները, ժայռերն ու անտառները, սրանց փայտի տեսակները, աղբիւրներն ու ակերը, այլ նա գիտէր ամէն մի գիւղի բնակութեան անհատների, մեծի թէ փոքրի, արուի թէ էգի անունները։ Մկրի հետ ման եկայ Տայոցքարի, Փէնէքկերտի, Բանայի, Ոլորի, Իշխանի, Աշմուշէնի, Դորդ-Քիլիսէի, Հարշիշի, Անիի, Կարսի, Խախի, Օշկի, Օթխայի հնութիւնները։ Այս երկիրը իր հնութիւններով, Մկրի պատմածները, աչքովս տեսածները, մանաւանդ խլամացած ժողովրդի խոստովանութիւնները այնպիսի խոր տպաւորութիւն թողին, որ ես անձնատուր եղայ այս երկիրը ուսումնասիրելու գաղափարին։

Իսլամ բնակչութիւնը ո՛չ միայն խոս-